ՏԵՂԵԿԱՆՔ-ՀԻՄՆԱՎՈՐՈՒՄ

«ՎԱՂԱՐՇԱՊԱՏ ՀԱՄԱՅՆՔԻ 2025 ԹՎԱԿԱՆԻ ԲՅՈՒՋԵՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ՎԱՂԱՐՇԱՊԱՏ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ՈՐՈՇՄԱՆ ՆԱԽԱԳԾԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

Վաղարշապատ համայնքի ավագանու «Վաղարշապատ համայնքի 2025 թվականի բյուջեում փոփոխություններ կատարելու մասին» 2025 թվականի որոշումը կատարելու, բյուջեի ֆոնդային մասի եկամուտների ավելացումը Վաղարշապատ համայնքի ավագանու որոշման նախագծով (այսուհետ՝ նախագիծ) նախատեսվում է իրականացնել հետևյալ փոփոխությունները

1. Հիմք ընդունելով Վաղարշապատ համայնքի ավագանու 2024 թվականի դեկտեմբերի 25-ի թիվ 111-Ն որոշումը.

1.1. Համայնքի բյուջեի վարչական մասի պահուստային ֆոնդի միջոցներից կատարել հատկացում համայնքի ֆոնդային բյուջե 100000.0 հազ. դրամ:

1.2. Համայնքի ֆոնդային բյուջեի ծախսերը ավելացնել 100000.0 հազ. դրամ և ուղղել Ճանապարհային տրանսպորտի /բաժին 04, խումբ 5, դաս 1/ <Շենքերի և շինությունների կապիտալ վերանորոգում> հոդվածին /հոդ. 5113/:

2. Ելնելով վերոգրյալից՝ առաջարկվում է Վաղարշապատ համայնքի ավագանու 2025 թվականի վերը նշված որոշման մեջ կատարել համապատասխան փոփոխությունները: